Հավելված 3
«Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ
«Հիփոթեքային վարկերի
տրամադրման» կանոնակարգի

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Վարկային դիմում-հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր

1. Վարկային դիմում-հայտ
2. Հաճախորդի անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ) (բնօրինակ)
3. Հաճախորդի հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ), բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից ՀԾՀ չստանալու վերաբերյալ (բնօրինակ կամ կրկնօրինակ)
4. Վաճառողի և վերջինիս ամուսնու (առկայության դեպքում) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ) (բնօրինակ)
5. Վաճառողի և վերջինիս ամուսնու (առկայության դեպքում) ծառայությունների համարանիշ (ՀԾՀ), բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից ՀԾՀ չստանալու վերաբերյալ (բնօրինակ կամ կրկնօրինակ)
6. Տեղեկանք Հաճախորդի աշխատավայրից, որտեղ պետք է նշվի վերջինիս զբաղեցրած պաշտոնը և ամսական աշխատավարձի չափը (բնօրինակ)
7. Այն դեպքում, երբ Հաճախորդը չի աշխատում, եկամուտը հաստատող այլ փաստաթղթեր և/կամ եկամուտների վերաբերյալ հայտարարություն (բնօրինակ)
8. Տեղեկանք բնակության վայրից (բնօրինակ կամ կրինօրինակ)
9. Եթե Հաճախորդի եկամուտները ձևավորվում են ձեռնարկատիրական գործունեությունից՝
   - հիմնադիր փատաթղթեր՝ պետական ռեգիստրի վկայական, ՀՎՀՀ, կանոնադրություն և այլն (բնօրինակ կամ կրկնօրինակ)
   - տեղեկանք գործունեությունից ստացված եկամուտների վերաբերյալ (բնօրինակ կամ կրկնօրինակ)
   - նախորդ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական, հարկային հաշվետվություններ (բնօրինակ)
10. Ձեռք բերվող, վերանորոգվող, կառուցապատվող անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական (բնօրինակ)
11. Ձեռք բերվող, վերանորոգվող, կառուցապատվող անշարժ գույքի ձեռքբերման հիմքը (օրինակ՝ գնման-վաճառքի պայմանագիր, նվիրատվության պայմանագիր, ժառանգության վկայական և այլն) (բնօրինակ կամ կրկնօրինակ)
12. Լրացուցիչ անշարժ գույքի գրավադրման դեպքում՝ գրավատուի անձը հաստատող փաստաթուղթ և ՀԾՀ, ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ամուսնության վկայական, ամուսնության պայմանագիր, ամուսնալուծության վկայական և այլն (բնօրինակ)
14. Ձեռք բերվող, վերանորոգվող, կառուցապատվող անշարժ գույքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեյից ստացված միասնական տեղեկանք՝ գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ (բնօրինակ)

15. Տեղեկանք ձեռք բերվող, վերանորոգվող, կառուցապատվող անշարժ գույքի հասցեում հաշվառված անձանց (բնօրինակ)
16. Ձեռք բերվող, վերանորոգվող անշարժ գույքի նախնական գնահատման տեղեկանք (բնօրինակ)
17. Վերանորոգման աշխատանքների իրականացման նախահաշիվ (բնօրինակ կամ կրկնօրինակ)
18. Կառուցման (կառուցապատման) նպատակով տրամադրվող վարկերի դեպքում կառուցման՝ օրենքով սահմանված նախագիծ, հողամասի սեփականության վկայական, շինարարության թույլտվություն, կապալառուի պայմանագիր (առկայության դեպքում), շինարարության և(կամ) վերանորոգման նախահաշիվ, տեղեկանք կառուցապատողից գնվող գույքի գնի և այլ տվյալների վերաբերյալ (բնօրինակ կամ կրկնօրինակ)
19. Գրավադրվող անշարժ գույքի գույքահարկի գծով պարտավորություն չունելու վերաբերյալ տեղեկանք իրավասու մարմնից (բնօրինակ կամ կրկնօրինակ)
20. Այլ փաստաթղթեր Ընկերության պահանջով:

Վարկը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր

1. Հաճախորդի ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ամուսնության վկայական, ամուսնության պայմանագիր, ամուսնալուծության վկայական և այլն (բնօրինակ)
2. Հաճախորդի հետ բնակվող կամ վերջինիս խնամակալության տակ գտնվող անձանց անձը հաստատող փաստաթղթեր կամ ծննդյան վկայականներ (բնօրինակ)
3. Երաշխավոր(ներ)ի անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ) (բնօրինակ)
4. Երաշխավոր(ներ)ի հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ), բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից ՀԾՀ չստանալու վերաբերյալ (բնօրինակ կամ կրկնօրինակ)
5. Տեղեկանք Երաշխավոր(ներ)ի աշխատավայրից, որտեղ պետք է նշվի վերջինիս զբաղեցրած պաշտոնը և ամսական աշխատավարձի չափը (բնօրինակ)
6. Այն դեպքում, երբ Երաշխավոր(ներ)ը չի աշխատում, եկամուտը հաստատող այլ փաստաթղթեր և/կամ եկամուտների վերաբերյալ հայտարարություն (բնօրինակ)
7. Գրավադրվող անշարժ գույքի վերջնական գնահատման հաշվետվություն (բնօրինակ)
8. Գրավադրվող անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վկայական (բնօրինակ)

Ելնելով տարաբնույթ հանգամանքներից կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

Ընկերությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին